ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019-2023 թվականների գործունեության միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 650-Լ որոշմամբ հաստատված՝ 2019 թվականին իրականացված միջոցառումների արդյունքների մասին

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

21. Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով առողջ ապրելակերպի խթանում

21.1. Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացում (հեռուստատեսությամբ՝ հաղորդումներով, սոցիալական տեսահոլովակներով, ռադիո հաղորդաշարերի, տպագիր մամուլի և ցուցապաստառների միջոցով)

2019թ. իրականացվել է.

- բնակչության իրազեկվածության մակարդակի բարձրացում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի երկրորդային ծխի ազդեցության հետևանքով հիվանդությունների առաջացման վտանգի վերաբերյալ,
- բժշկական և ուսումնական հաստատություններում, համայնքապետարաններում, մարզպետարանում փակցվել են տեղեկատվական պաստառներ,
- այցելուներին տրամադրվել են տեղեկատվական թերթիկներ,
- առաջնային օղակի բուժաշխատողների կողմից քարոզչական աշխատանքներ են տարվել ուսումնական հաստատություններում,
- հանձնարարական է տրվել մարզի բժշկական կազմակերպությունների տնօրեններին հետևողական լինել գործող օրենքով առողջապահական հաստատություններում ծխախոտի օգտագործմանն սահմանված արգելքի կիրարկման համար,
- իրականացվել են աշխատանքներ ծխախոտի օգտագործման հետևանքով առաջացած կախվածության բուժման համար բնակչությանը ներգրավելու նպատակով, ինչպես նաև ծխող այցելուի բացահայտմանև համապատասխան խորհրդատվության տրամադրման համար:

Առողջ ապրելակերպի, այդ թվում՝ ծխախոտի օգտագործման և ծխախոտի ծխի վնասակար ազդեցության վերաբերյալ հանրային իրազեկման արշավի իրականացման

շրջանակներում մարզի առողջապահական հաստատությունների բուժանձնակազմի կողմից պարբերաբար ազգաբնակչությանը տրամադրվում է մատչելի տեղեկատվություն և խորհրդատվություն ոչ վարակիչ հիվանդությունների առաջացման ռիսկերի նվազեցման և բնակչության շրջանում ծխախոտի օգտագործման նվազեցման ուղղվածությամբ՝ հաշվի առնելով միջոցառմանը ընդգրկված հասարակության թիրախ խմբերի առանձնահատկությունները:

23. Պայքար առավել տարածված ոչ վարակիչ հիվանդությունների դեմ

23.1. Թոքերի քրոնիկ օբստրուկտիվ հիվանդության դեմ պայքարին ուղղված աշխատանքներ են տարվում մարզի բուժհաստատությունների բոլոր աշխատակիցների կողմից՝ բարձրացնելու այն բոլոր թոքային հիվանդությունների ժամանակին ախտորոշման և բուժման որակը, որոնք բերում են ԹՔՕՀ:

23.2. ՀՀ Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության մասնագետները և մարզի բուժհաստատությունների ուռուցքաբանները մասնակցել են «Չարորակ նորագոյացությունների դեմ պայքարի ռազմավարությունը և ռազմավարության կատարումն ապահովող 2019-2023 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի քննարկմանը և ներկայացրել առաջարկություններ:

23.3. ՀՀ առողջապահության նախարարի հրամանով հաստատված սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներն իրականացվել են ՀՀ Արարատի մարզի բուժհաստատությունների կողմից սկրինինգի միջոցով՝ սրտանոթային հիվանդությունների վաղ հայտնաբերման կանխարգելմանն ուղված միջոցառումներով, ինչպես նաև մարզի բուժհաստատությունների անձնակազմը մասնակցել է սիրտ-անոթային հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումների շրջանակներում կազմակերպված «Սրտի շաբաթին» նվիրված սրտի համաշխարհային օրվան, ազգաբնակչությանն իրազեկման աշխատանքներ են տարվել առողջ ապրելակերպի անհրաժեշտության վերաբերյալ սրտանոթային հիվանդությունների կանխարգելման հարցում՝ ծխախոտի օգտագործման, ալկոհոլի չարաշահման, ազգաբնակչության զարկերակային ճնշման չափումներ հանրային վայրերում, դպրոցներում դասախոսություններ, հանրային միջոցառումներ քաղաքների բանուկ մասերում, մանկավարժների զարկերակային ճնշման չափումներ դպրոցներում:

24. Առողջապահական համակարգի գործունեության արդյունավետության բարձրացում

24.1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում բնակչությանը մատուցվող բժշկական օգնության և սպասարկման որակի բարելավմանն ուղղված աշխատանքներ են իրականացվել մարզի բուժհաստատությունների կողմից: 2019 թվականի մայիսին <<Արտաշատի ԲԿ>> ՓԲԸ-ում գործարկվել է մարզի առաջին համակարգչային տոմոգրաֆը /KT/: Արտաշատի ԲԿ-ն վերազինվել է նոր, գերժամանակակից, Siemens ընկերության 2018 թվականի արտադրության համակարգչային տոմոգրաֆով: 2019 թվականի օգոստոս ամսին <<Արտաշատի ԲԿ>> ՓԲԸ-ն ձեռք է բերել << Shtorc>> ֆիրմայի լապորոսկոպիկ սարքը: Կարևոր իրադարձությունները հնարավոր է եղել իրականացնել Արարատի մարզպետ Գարիկ Սարգսյանի նախաձեռնությամբ: 2019 թվականի սեպտեմբեր ամսից համակարգչային տոմոգրաֆիան, ինչպես նաև էխոկարդիոգրաֆիան և մամմոգրաֆիան <<Արտաշատի ԲԿ>> ՓԲԸ-ում իրականացվում են նաև պետ.պատվերի շրջանակներում:

24.2. ՀՀ Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության և մարզի բուժհաստատությունների տնօրենները մասնակցել են «Հայաստանի Հանրապետության առողջապահական համակարգի հնգամյա (2020-2025 թվականներ) զարգացման ռազմավարությունը հաստատելու մասին» փաստաթղթի քննարկմանը և ներկայացրել առաջարկներ:

34. ՀՀ բնակչության ռիսկային խմբերում ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում

34.1 Մարզի բնակչության մոտ ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման նպատակով ռիսկային խմբերի շրջանում առողջության առաջնային պահպանման օղակում շարունակական սքրինինգային հետազոտություններ են իրականացվում՝ հիպերտոնիա, շաքարային դիաբետ, արգանդի պարանոցի քաղցկեղ հիվանդությունների վաղ հայտնաբերման և կանխարգելման համար:

77. Արտակարգ իրավիճակներում բնակչության վարքականոնների վերաբերյալ դասընթացների, վարժանքների ուսումնական ծրագրերի մշակում և ներդրում

77.1 Արարատի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության իրազեկման և կրթվածության մակարդակի բարձրացման նպատակով, կազմվել և սահմանված կարգով ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների ղեկավար կազմի ու մասնագետների, Արտակարգ իրավիճակների նախարարության ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայում 2019 թվականին բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության հիմնահարցերով վերապատրաստվողների ցանկը / թվով 49/:

2020 թվականի ընթացքում վերապատրաստման գործընթացին կմասնակցեն մարզի 40 մասնագետներ: Գործընթացը իրականացվում է ամենամյա պարբերականությամբ:

80. Համայնքներին սպառնացող վտանգների դասակարգում ըստ առաջնայնության՝ վտանգների, խոցելիության և կարողությունների վերաբերյալ հաշվետվությունների հիման վրա

80. Մարզի համայնքներում աղետների դիմակայունության բարձրացման նպատակով, ի կատարումն ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարարի 2017 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 01/22/7809-17 հանձնարարականի պահանջների, առաջարկվել է համայնքներին՝ իրականցնել աղետների ռիսկի կառավարման պլանների մշակման աշխատանքները: Ներկայումս 22 համայնքներում ձևավերված են աղետների ռիսկի կառավարման խորհուրդներ, որոնք վերհանում են համայնքին սպառնացող վտանգները, իրականցնում դրանց դիմագրավման գործողություններ, ինչպես նաև իրականցնում համայնքի առետների ռիսկի կառավարման /ԱՌԿ/ պլանների մշակման աշխատանքները:

Մարզի թվով 19 համայնքներում ավարտվել է նշված պլանների կազմման աշխատանքները, իսկ մնացած համայնքներում գործընթացը շարունակվում է:

Կատարված աշատանքների ուղղությամբ համայնքներին պարբերաբար ցուցաբերվում է մեթոդական օգնության մարզպետարանի և Արարատի մարզային փրկարարական վարչության կողմից:

104. Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակայնորեն օգտագործելու ուղղությամբ խթանների ու մեխանիզմների մշակում

104.1 ,,Գյուղատնտեսական նշանակության չօգտագործվող հողերը շրջանառության մեջ ներառելու ուղիների մշակում,, միջոցառման շրջանակներում մարզում ավելի քան 200 հա չօգտագործվող հողերում կատարվել է բամբակի ցանք:

105. Գյուղատնտեսության ոլորտում նոր տեխնոլոգիաների կիրառում

105.1 ,,Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման,, ծրագրի շրջանակներում մարզի 6 /Նոր-Կյանք, Արտաշատ, Պ.Սևակ, ք Վեդի, Լուսաշող, Այգեզարդ/ համայնքների 73.0 հա հողերում ներդրվել է կաթիլային ոռոգման համակարգ: Տրամադրված վարկի ընդհանուր գումարը կազմել է 136 մլն 584,4 հազար դրամ, սուբսիդավորման գումարը կազմել է 19մլն 969,311 հազար դրամ, փոխհատուցվել է 576,874 հազար դրամ:

105.2 ,,ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցություն,, ծրագրով մարզի Ազատավան՝ 4.5հա և Արմաշ՝ 7.3հա համայնքներում ինտենսիվ այգիների հիմնման համար սուբսիդավորված վարկը կազմել է 146 մլն 850.286 հազար դրամ: Տրամադրված սուբսիդավորման գումարը կազմել է 6մլն 108.726 հազար դրամ:

105.3 ,,ՀՀ-ի գյուղատնտեսությունում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման,, ծրագրով 2019թ վարկեր չեն տրամադրվել, բայց իրականացվել է նախորդ տարի նույն ծրագրով տրամադրված վարկի 8մլն 82.799հազար դրամի սուբսիդավորում:

105.4 Հողերի ագրոքիմիական հետազոտության և բերրիության բարձրացման միջոցառումների ծրագրի շրջանակներում մարզի Լանջազատ, Շահումյան, Մրգանուշ, Արևշատ, Մխչյան, Կանաչուտ, Բյուրավան, Դալար, Հնաբերդ, Փ, Վեդի, Նոր Ուղի, Զանգակատուն, Լանջառ, Վարդաշատ, Լուսաշող, Սիփանիկ, Ազատաշեն, Գեղանիստ, Ղուկասավան, Հովտաշատ համայնքներում 2019թ հետազոտվել են գյուղատնտեսական

նշանակության 14.038 հազ. հա հող, որոնց արդյունքների հիման վրա կազմվել են ագրո-քիմիական քարտեզներ;

105.5 ,,Փոքր և միջին ,,խելացի,, անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության,, ծրագրով աշխատանքներ չեն իրականացվել:

106. Մեքենատրակտորային համակազմի թարմացման և գյուղատնտեսական տեխնիկայի նկատմամբ գյուղատնտեսության կարիքների բարելավում

106.1 ՀՀ-ում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրով դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզ է ներկրվել 34 գյուղատնտեսական տեխնիկա: Ընդհանուր վարկավորման գումարը կազմել է 196մլն 359.4 հազար դրամ, սուբսիդավորման գումարը կազմել է 11մլն 256.694հազար դրամ:

107. Գյուղատնտեսական և գինեգործական արտադրանքի արտահանման ծավալների ավելացմանն աջակցող մեխանիզմների մշակում և ներդրում

107.1 Պետական աջակցություն ՀՀ-ի խաղողագործության և գինեգործության ոլորտներում վարվող պետական քաղաքականության ու զարգացման ծրագրերի իրականացում: Ծրագրի իրականացմանը նպաստում է խաղողի այգիների տարածքների, բերքի ավելացումը /2018թ-ի համեմատ +136հա և +21900տ բերք/, 5% վարկերի տրամադրումը, հումքի մթերումների համար ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը:

107.2 Գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկայի ստեղծման ներդրումային ծրագրի մշակման նպատակով մարզերի տարածաշրջաններում հետբերքահավաքային կարիքների/իրացման և մթերման կետեր, պահեստարաններ, սառնարանային տնտեսություն և այլն/ և մթերման կետերի ստեղծման համար անհրաժեշտ հողատարածքների և շինությունների գնահատում: Մարզի Հովտաշեն համայնքի վարչական տարածքում հիմնվել է գյուղատնտեսական մթերքների մեծածախ շուկա: Կառուցման աշխատանքները կավարտվեն 2020թ մայիս ամսին:

110. Ագրոպարենային համակարգի սարքավորումների, նոր տեխնոլոգիաների, սննդի անվտանգության համակարգերի ներդրման աջակցություն

110.1 ՀՀ-ում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի իրականացում: դեկտեմբերի 1-ի դրությամբ մարզ է ներկրվել 15 սարքավորումներ: Ընդհանուր վարկավորման գումարը կազմել է 318մլն 419.849 հազար դրամ, սուբսիդավորման գումարը կազմել է 3մլն 930.211հազար դրամ:

111. Տեղական սերմնաբուծության և սերմարտադրության , ինտենսիվ գյուղատնտեսության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում

111.1 Հացահատիկային, հատիկընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցություն ծրագրի շրջանակներում մարզի Դարակերտ համայնքի «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՓԲԸ գիտական կենտրոնի փորձարարական տնտեսությունում, որտեղ գիտական հետազոտությունները և տեղական սորտերի բարձր վերարտադրության սերմերի արտադրությունը իրականացվում է ինչպես պետական պատվերի շրջանակներում, այնպես էլ կենտրոնի արտաբյուջեից գոյացած միջոցներով, 22 հա գյուղ. նշանակության հողատարածքում ցանքաշրջանառության ապահովման նպատակով 2018թ աշնանը ցանվել է 7,0 հա ցորեն, որից արտադրվել է 20,3 տ բերք և 3,0 հա առվույտ: 2019թ-ին ցանվել է 10 հա աշնանացան ցորեն:

112. Անասնաբուծության զարգացմանն ուղղված պետական աջակցության ծրագրերի իրականացում, տոհմաբուծարանների ստեղծմանն աջակցություն

112.1 ՀՀ-ում 2019-2024թթ տավարաբուծության զարգացման ծրագրի շրջանակներում մարզում շահառուներ չկան:

113. Կենդանիների և բույսերի հիվանդությունների կանխարգելման արդյունավետ համակարգի ներդրման ապահովում

113.1 Բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացում: Մարզի <<Անասնաբուժասանիտարիայի և բուսասանիտարիայի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի կողմից տարվա ընթացքում բուսասանիտարական մոնիթորինգ է իրականացվել ընդամենը 29900 հա–ի վրա: Արդյունքում հայտնաբերված մկնանման կրծողների և մորեխների տարածվածությունը գարնանը շատ չէր: Տարվա երկրորդ կեսին նոր հետազոտությունների արդյունքում մկնանման կրծողների դեմ պայքար կատարվեց 11900հա վարակված գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի վրա, ոչ մեծ քանակով մորեխների դեմ՝ 5350 հա-ի վրա: Մոնիթորինգ է իրականացվել հետևյալ հիվանդությունների հայտնաբերման համար. պտղատու ծառերի վնասատուներ և հիվանդություններ՝ 6200 հա, խաղողի վնասատուներ և հիվանդություններ՝ 3160հա, բանջար-բոստանային մշակաբույսերի վնասատուներ և հիվանդություններ՝ 2790հա, հացահատիկային մշակաբույսերի վնասատուներ և հիվանդություններ՝ 500հա: Արդյունքում հայտնաբերվել է վահանակիր տիզ, լվիճ, ողկուզակերի վնասատու, ականող ցեցի թիթեռ, որոնց մասին տեղեկացվել է համայնքների ղեկավարներին: Կարտոֆիլի ցեցի և լոլիկի ականող ցեցի հայտնաբերման համար ուսումնասիրվել է 2790 հա տարածք: Մարզի 53 համայնքներում տեղադրվել են 220 հատ կարտոֆիլի ցեցի և լոլիկի ականող ցեցի ֆերոմոնային թակարդներ:

113.2 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում ծրագրի իրականացում: <<Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում>> ծրագրի շրջանակներում կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելման, կենդանիների և մարդու համար ընդհանուր հիվանդություններից ազգաբնակչության պաշտպանության, հանրապետությունում հակահամաճարակային կայուն իրավիճակի ստեղծման համար իրականացվել են անասնահակահամաճարակային կանխարգելիչ միջոցառումներ՝ ապահովելով այդ հիվանդությունների նկատմամբ վարակամերժ (իմուն ֆոն ունեցող) գլխաքանակ: Իրականացվել են 15 տեսակի միջոցառումներ որոնցից 8-ը՝ խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ բրուցելյոզ-32250 գլուխ, դաբաղ-115300 գլուխ, սիբիրախտ-63400 գլուխ, խշխշան պալար-41000 գլուխ /մինչև 4 տարեկան/, հանգուցավոր մաշկաբորբ-18533 գլուխ, տուբերկուլյոզ-877 գլուխ, պաստերելյոզ-980 գլուխ, լեյկոզ-360 գլ.: Մանր եղջերավոր կենդանիների արյան նմուշառում՝ բրուցելյոզ-

20553 գլուխ, դաբաղ-60822 գլուխ, բրադզոտ-չի իրականացվել, խոզերի դասական ժանտախտ-76400 գլուխ, թռչունների կեղծ ժանտախտ-290300 գլուխ, ձիերի սիբիրախտ-751 գլուխ, մեղուների վարրուատոզ, նոզեմատոզ-12990 դոզա: Ախտորոշիչ, կանխարգելիչ միջոցառումներն ընդգրկել են ախտորոշիչ՝ 540 040 կենդանի, կանխարգելիչ՝ 684 958 կենդանի, ընդհանուր՝ 738 998 գլուխ կենդանի, կամ 374 835.6 պայմանական գլուխ:

113.3 Դաբաղ հիվանդության շճահետազոտության միջոցառումների իրականացում ծրագրի շրջանակներում իրականացվել է մեկ անգամ դեկտեմբեր ամսին:

117. Գյուղատնտեսության աջակցության հիմնական սկզբունքների, մեթոդաբանության և ռազմավարության սահմանում

117.1 Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով մարզի 1137 հողօգտագործող ստացել է 4մլրդ 65.165 մլն դրամ վարկ, որի սուբսիդավորման գումարը կազմել է 278մլն 211.955հազար դրամ:

117.2 Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով 35 վերամշակող կազմակերպության տրվել է 4մլրդ 92մլն 446.138 հազար դրամ վարկ, որի սուբսիդավորման գումարը կազմել է 118մլն 112.598 հազար դրամ:

117.3 ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030թթ ռազմավարության մշակում; Մարզում հաշվետու տարում զարգացման ռազմավարությունն իրենից ներկայացնում է գյուղատնտեսության ոլորտին սուբսիդավորմամբ տրամադրված վարկեր՝ ավելի, քան 4մլրդ դրամ, մթերումների նպատակով ագրովերամշակող ոլորտին տրված սուբսիդավորված վարկեր՝ ավելի, քան 4մլրդ դրամ, ներտնտեսային ոռոգման համակագերի վերականգնման աշխատանքներ՝ ընդհանուր 660 մլն դրամ արժողությամբ, գյուղատնտեսական մթերքների մթերումների ավելացում, չմշակվող հողերի ավելացում՝ ավելի քան 300 հա, ինտենսիվ այգիների ավելացում՝ ավելի քան 55հա և 45 հա-ի վրա շարունակվող աշխատանքներ, կաթիլային ոռոգման ներդրում՝ ավելի, քան 300 հա:

224. Միավորված բազմաբնակավայր համայնքներում տեղեկատվական համակարգերի ներդրում, քաղաքացիներին տրամադրվող վարչական ծառայությունների որակի բարելավում:

224.1 Մարզի միավորված Ուրցաձոր համայնքում համայնքային կառավարման տեղեկատվակն համակարգը (ՀԿՏՀ) ներդրվել է 2014 թվականից:

224.2 Մարզի միավորված Ուրցաձոր համայնքում մեկ պատուհանի սկզբունքով գործող քաղաքացիների սպասարկման գրասենյակը (ՔՍԳ) գործում է 2017 թվականից:

225. Համայնքային ծառայության համակարգի զարգացում:

225.2 Սեփական կարողությունների զարգացման և կատարելագործման նպատակով վերապատրաստվել են մարզի թվով 120 համայնքային ծառայողներ:

227. Համայնքների վարչական տվյալների շտեմարանի զարգացում:

227 Մարզում ներդրվել է <<Համայնքային վարչական տվյալների շտեմարանի>> էլեկտրոնային ծրագիր և մեթոդական խորհրդատվություն է տրամադրվել համայնքապետարանների աշխատակազմերի համապատասխան աշխատակիցներին այդ շտեմարանը լրացնելու և պարբերաբար թարմացնելու ուղղությամբ:

267. ***Կանոնավոր ուղևորափոխադրումներում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում, կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետ կարգավորում, այդ թվում միասնական երթուղային ցանցի ձևավորում***

267.1 Կանոնավոր ուղևորափոխադրումների արդյունավետ կարգավորման, այդ թվում միասնական երթուղային ցանցի ձևավորման նպատակով Արարատի մարզպետարանը մասնակցել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից միասնական երթուղային ցանցի օպտիմալ տարբերակի մշակման աշխատանքներին:

267.2 ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել Արարատի մարզում երթուղային ցանցի փաստացի ուղևորահոսքի վերաբերյալ հաշվարկներ, որպեսզի բոլոր համայնքները ապահովվեն արդյունավետ տրանսպորտային սպասարկմամբ, բարձրանա ուղևորափոխադրումների սպասարկման որակը և վերահսկողությունը: